

սովորական նօտագիր է, յամենայն դէպս ոչ Գրգորի կամ Գրիգորի գրչից, այլ բողոքովին տարբեր գրչութիւն, աւելի մութ թըղթի վրայ Զ-ի այս երկրորդ մասը վերջից թերատ լինելով չունի որ և է յիշատակարան, ուրեմն և անթուական է*։ Զ-ի այս անթուական մասումն է «Գիրք Առակաց» էջ 71ա—89բ, որն և Մառք նշանակում է Ա տառով և Առակաւոր բանք պիտանիք են, էջ 90ա-95բ, որ Մառք նշանակում է Ե տառով, Եւ որովհետեւ Զ-ի թէ Ա և թէ Ե մասերը բողոքովին նոյն նօտագիր գրչութեամբ են, մի ձեռքից գրուած, մի և նոյն թղթի վրայ, անթուական և որովհետեւ Ե-ի մէջ գտնուած է Հայելուց փոխառութիւն, ուստի և՛ թէ Ա-ն և թէ Ե-ն գրուած պէտք է լինին 1660 թուից յետոյ։

Այսպիսով ուրեմն Հայելի Վարուցը տալիս է մեզ մի սահմանորոշ թուական ոչ միայն Աղուէսագրքի, նրա արարերէն և վրացի թարգմանութեանց, այլ և Մառի Ա, Ե, Բ և ԲԵՐՈՒՆԻ № 95 Զ-երի համար, որոնք իրենց այժմեան կազմութեամբ, առակների այժմեան թուով և փիճակով չեն կարող 1660 թուից առաջ լինել, թէ և իրենց բովանդակութեան մեծ մասովը լինին ինչպէս և են իսկապէս, այդ թուից շատ կանուխ։

Նկատելու է նաև, որ Հայելու թարգմանութիւնից հազիւ 8 տարի անցած, արդէն Աղուէսագրքում (1668) փոխառութիւն ենք գտնում Հայելուց։ Այսպիսի արագ ազդեցութիւնը հեշտութեամբ բացատրուած է Հոյեղու կարճառօտ պատմութեանց առականման, խրատական և հետաքրքրաշարժ նիւթի յարմարութեամբ Առակագրքերի համար Տեսանք արդէն, որ Դաւրիժեցին 1662-ին յիշելով Հայելին, կոչում է նրան «բանք առակաւոր, որ զվարուց և զկենցաղաւարութենէ մարդկան պատմէ, իբր թէ օրինակ ամենայն մարդկան . . . և յոյժ համեղ և ախորժ են բանք այս Գրոյս»։ Հասկանալի է ուրեմն, որ Առաքելի ժամանակակիցները, որ նրա ծա-

շակն ունէին, պիտի շտապէին այդ «համեղ և ախորժ» պատմութիւններն իրենց Ժողովածուների մէջ մտցնել, ի վերջոյ անհրաժեշտ է աւելացնել և այն, որ Մառք խօսելով Արեւմտեան-Յւրոպական ազդեցութեան մասին Առակագրքերի վրայ, և մատնանիշ լինելով խրատական «և հետաքրքրաշարժ» պատմութեանց Ժողովածուների, մանաւանդ թարգմանականների ուսումնասիրութեան անհրաժեշտութեան վրայ, անցողակի յիշում է ի միջի այլոց նաև՝ Ստեփանոսի (Լեհացու) թարգմանած քանք առակաւորը, այսինքն է Հայելի Վարուցը, առնելով Առաքել Դաւրիժեցուց (Сборник Ч. I. § 267)։

Գալուստ Տէր Մկրտչեան

22 Յունիսի 1899.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԷՋ

(ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՎ ՈՒՍՈՒԱԾՔ)

(Նարունակութիւն)*

Ե.

ՀԱՅԿԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Հայկի առասպելն էութեամբ վիպական է։ Այս առասպելը, ինչպէս բերած օրինակներից երևում է, իւր էական գծերով մի այնպիսի պատմութիւն է, որ շատ տարածուած է։ Մենք բերեցինք իբրև օրինակ Դաւթի և հսկայ Գողիթի կոիւր, որին նման է Սմբատի ու Հեփթաղի կոիւր, իսկ այս երկսին նման է, մոտամբ միայն, Տրդատի ու Դիւան իշխանի կոիւր։ Հայկի ու Բէլի կոիւն՝ ասոնց նման լինելով հանդերձ՝ աւելի նման է հսկայ Սամի և Զէրքույի կոուին։ Մենք օրինակները, որոնց նմանները յետոյ էլ կրթեսենք, կարող էինք բազմապատկել, Բայց բերածնե-

* Աւելի միջոյ լինելու համար պէ՛տք է տակ, որ էջ 89^բ կայ մի սոյ՝ «Ո՞վ բերեցաւ յիշեցե՛ք զանիմաս» յիշատակարանի սկսումով, որ ևւ այդպէս մնում է քերի։

* Տես. «Արարես» 1899 թ. համար ԺԲ. եր. 529.

ընել ցոյց են տալիս որ մեր Հայկի ու Բէլի-
լի-զրոյցը իւր էութեամբ, բովանդակութեամբ
ոչ միայն ժողովրդական վիպական ոգուն
հակառակ չէ, այլ շատ նման է հանգունա-
տիպ բազմաթիւ զրոյցներին: Բոլորն էլ իրենց
ձեռքով ժողովրդական վիպական ամփոփումն
են թշնամի ազգերի մէջ եղած նախնական
կռիւների որոնց մէջ պտրագլուխներն առա-
ջին տեղն են բռնում:

Այս ժողովրդական զրոյցները, — լինին
իրողութեան վրայ հիմնուած, ինչպիսին կա-
րող են լինել Դաւթի, Տրդատի և Սմբատի
կռիւները թէ զուտ առասպելական, — զանա-
զան ժողովուրդների բերանին միատեսակ կեր-
պարանք են ստացել, քանի որ ամեն տեղ էլ
ազգերի վիպական շրջանում ընդհանրապէս
ոչ միայն պատերազմներն իրար նման են, այլ
և այդ պատերազմների մասին կազմուած
զրոյցները: Դա ընդհանուր հոգեբանական
երեւոյթ է: Մարդիկ և ազգեր զարգացման
միևնոյն շրջաններն են կատարում: Միւս կող-
մից, պէտք չէ մոռանալ ազգերի հոգեբանու-
թեան և այն մեծ երեւոյթը որով հին զրոյց-
ները միշտ նորոգուած են: Եւր կատարուած
իրողութիւնների և անցքերի պատմութիւնը
ժողովրդի բերանին ստանում է արդէն պատ-
րաստի հին նման զրոյցների ու առասպելնե-
րի կերպարանքը: այսպէս ասած՝ նոր զրոյցը
հազնում է հին զրոյցի հազուադէպ որով և
հինը փոփոխուելով յարատեւում է: Այսպէս
պէտք է հասկանալ Հայկի Սմբատի ու Տրդա-
տի զրոյցների նմանութիւնը: Անշուշտ Սե-
բեոսը Սմբատի ու Հեփթաղի կռիւը թէպէտ
և Ազաթանգեղոսի պատմութեամբքին շատ նման
իրենից չէ չինում: Բայց և նա այդ բանը
հաւատաւար լսելով, այսինքն ժողովրդի մար-
դոց, թէկուզ նոյն իսկ ականատեսների գրու-
ցելով է գրում: Իսկ այդ ժողովրդի մարդոց
բերանին հենց Սմբատի կռուի պատմութիւնը
մի տեսակ հին վիպական կերպարանք ստա-
ցած պիտի լինի, և մօտեցած Հայկի ու Բէ-
լի կռուին:

Երբ մի անգամ տեսնում ենք, որ Հայ-
կի առասպելն իւր էութեամբ ժողովրդական
վիպական գոյն ունի, — որևէ զխաւորն է, —
այնուհետև մեծ նշանակութիւն է ստանում

այն հանգամանքը, որ Հայկի կռիւը իւր ման-
րամասնութիւնների մէջ, զրեթէ սկզբից մին-
չև վերջ տարած է շատ վիպական ձևերով,
դիւեագնական վիպական կերպարանքով՝ ինչ-
պէս տեսանք, նման Սամի և Բէրբույի
ուրին: Թուենք զխաւորները:

1. Երկրի ղըրղալը երկու կողմերի հրա-
կաների յարձակման ժամանակ իսկական
դիւեագնական վիպական մի գիծ է, որ շատ
ազգերի վէպի մէջ կրդանենք: Բայց չնայելով
սորան, չգիտենք ինչպէս պ. Խալաթեանը
գրում է (եր. 113) հեշտ կերպով. «Յոյն
իսկ պատմուածքը — Բէլի դեսպան ուղարկելը
Հայկին, կռուի պատրաստուելը, Հայկի ճառն
իւր զօրականներին, Բէլի սպառապիւնութիւնը,
ճակատամարտի պատկերը և մի քանի տաս-
նեակ հայերի պատերազմական խոնուծից
(НАТІСКЪ) երկրի արագին ղըրղիւնը» [չակերտ-
ներն իրենն են], — ոչինչ վիպական չու-
նի: Եւսիս մի քանի տասնեակ հայերի»
կռուից չէ երկիրը գողում ինչպէս գրում է
պ. Խալաթեանը ծաղրով, այլ երկու կողմի
հսկանների կռուից, որոնք, կարծում ենք,
«մի քանի տասնեակ հայերից» շատ ասորեր
բաներ են: Եւ ապա, եթէ պ. Խալաթեանը,
շատ չէ, փոքր ինչ ուշադրութիւն դարձնէր ժո-
ղովրդական վիպական մոտիւններին, կրտսնե-
ր լիութիւն որ երկիրը գողում ու թնդում է ոչ
միայն հարիւրաւոր՝ Հայկի ու Բէլի նման
հսկանների կռուի ժամանակ, այլ հենց այդպի-
սի հսկաններից մէկի սովորական քայլերիս էլ:
Թող մտաբերէ նա միայն Ռոստոմի և կամ
նոյն իսկ մեր Սասնու ծուռ Դաւթի քայ-
լուածքը:

2. Վիպական գծերից է, հակառակ
պ. Խալաթեանի ցանկութեան, նաև Բէլի
դեսպան ուղարկելը Հայկին, որ սա իրեն
հնազանդի Մենք երկու նման օրինակ միայն
կրբերենք: Մեր «Սասնու ծուռի» մէջ, չնա-
յելով հսկայ Դաւիթը մեաներ է հասցրել
և նոյն իսկ անպատուել է դեանման հսկայ
Մարմալքին: Բայց սա իսկոյն չէ գալիս զօրքով
Սասուն, այլ նախ դեսպան է ուղարկում: որ
իրեն հնազանդի Դաւիթը: Երբ իւր դեսպա-
նը հպարտ Դաւթից խայտառակարար յետ է
ճանապարհում, նոր նա զօրաժողով է լինում

և զայն Դաւթի վրայ: Բայց այս անգամ էլ զեռ նորից զեւպան է ուղարկում նոյն նպատակով: Կրկին մերժում ստանալուց յետոյ, նոր կռոււմ են, իսկապէս Դաւթն ու Մարամելքը մենամարտում են: Դաւթն սպանում է Մարամելքին և կռիւ վերջանում է: Ուրեմն մեզ ծանօթ նոյն պատմութիւնը, որ ուրիշ շատ զծերով ևս նման է իւր ընկերներին:

Շահնամայի¹ մէջ Բէյքաւուն արշաւում է Մաղանդարանի վրայ և չնայելով որ նա Մաղանդարանի թագաւորի բարեկամ հսկայ զեւերից խիստ փնասոււմ է, բայց և այնպէս իւր զիւցազն Փարհազին զեւպան է ուղարկում Մաղանդարանի թագաւորին, նամակ զրելով և պահանջելով նորանից հպատակութիւն և իւր աւատակներ զառնար: Մաղանդարանի թագաւորը հպարտութեամբ ու խտուածամբ մերժում է: Չնայելով խիստ վիրաւորական պատասխանին՝ Բէյքաւունը նորից զեւպան է ուղարկում այս անգամ Ռոստամին, նամակ զրելով. «Մոռորնակ ու ծուռ է քո խելքը՝ յիմարը միայն կարող է այգալիսի բաներ մոռծել: Փարատիր քո հոգու այգ հպարտութիւնը: Արա ստիկօրէն ինչ որ հրամայում եմ քեզ, թէ չէ զօրքերս քո դէմ՝ կը վարեմ ու կը լրսփռեմ ծովէ ծով և քո ուղեղը՝ զեւերի զիակների պէս կերակուր կը տամ անդդներին»: Մաղանդարանի թագաւորն աւելի ևս խտուածամբ պատասխան է տալի և զօրածողով լինելով՝ սպառազինուում է: Բէյքաւուն էլ իւր զօրքն է առաջ վարում: աջ ու ձախ գնդերը յանձնելով այս ու այն զօրավարին, ինքը մէջանդում է մնում իսկ զօրքի առաջից գնում է Ռոստամը: Ապա զայն է Զույայի (Dschuja)

և Ռոստամի մենամարտը հայհոյալից խօսակցութեամբ, նման մեզ ծանօթ Դաւթի ու Գողիաթի, Դաւթի ու Մարամելքի կռիւներին և իւր միւս ընկերներին:

Այսպէս զեւպան ուղարկելը՝ հպատակութիւն և հարկ պահանջելու համար, ինչպէս և զեւպանութիւնից յետոյ զօրք ժողովելը և ինչ մի տարածուած վիպական զիծ է: Ուրիշ օրինակներ բերելն աւելորդ ենք համարում:

3. Վիպական զիծ է խտուածամբ ու կոպտութեամբ խօսելը, որ նախնի ժամանակների կոպիտ բարքերի արդիւնք է: Դեւպանութեան խօսքերից Բէյլի պատգամը նուրբ խտուածիւն ունի և թէպէտ և Մօրենացու կողմից ծարտասանօրէն յղուած, բայց և այնպէս կոպտութիւնը և Բէյքաւունի պատգամի նմանութիւնը զեռ երևում է: Հայկի պատասխանի համար Մօրենացին բաւականացել է ասելով միայն թէ «խտուածամբ» էր: Բայց Անանունի մէջ գտնում ենք նոյն բովանդակութիւնն իրրեւ խօսակցութիւն Հայկի և Բէյլի մէջ. «Զի՛ պնդեալ զաս զհետ իմ՝ դարձիր անդրէն ի տեղի քո՛ զի մի՛ մեռանիցիս այսաւ ի ձեռաց իմոց. քանզի ոչ վրիպի նետ իմ իմիք»: Պատասխանի ետ Բէյլ և ասէ. «Վասն այնորիկ՝ զի մի՛ անկցիս ի ձեռս մանկաւոյ իմոյ և մեռանիցիս. այլ եկ ի ձեռս իմ և կեաց ի տան իմում խաղաղութեամբ, ունելով ի զօրծս զմանկունս ի տան իմոյ զօրսականս: Պատասխանի ետ նմա Հայկն և ասէ. «Եւն ես զու և յերամակէ շանց՝ զու և ժողովուրդ քո: Եւ վասն այնորիկ թափեցիք իսկ այսաւ ի քեզ զկապարծս իմ:»¹

«Երկու հերոսների իսկական վիպական հայհոյական խօսքերով այս պատմութիւնը թողնում է մի բոլորովին նախնական (altertümlich) և սկզբնական տպաւորութիւն», գրում է այս առթիւ պ. Դեյցերը²: Այս նկատողութիւնը շատ ճիշտ է: Օրինակներ բերելն աւելորդ ենք համարում: Եանկացողը կարող է գտնել Շահնամայի ու իլիականի մէջ, Դաւթի ու Գողիաթի կռուի մէջ և ուրիշ շատ տեղերում:

1. Heldensagen von Firdusi, an deutscher Nachbildung, von A. F. Schack, Berlin, 1865. Էր. 143 համ.

2. Հմեռ. Խոսեմայի. Ա. ժա. Անախի (Բեյ) ... զմիում յորից իւրոց առ Հայկ... զայ նմա ի հնազանդութիւն և կեաց խաղաղութեամբ: Բնութեցի, ասէ, ի մէջ ցրտութեան ստոնամանաց. այլ չէ ուղեւալ մեղկեւ գգրառչիւն ստոնացեալ ի նպարտացեալ բարուցի, և հնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարտութեան, ուր հանոյ ե ինչ յերկիս իմումս:

1. Պատմութիւն Սերքուսի կախախցոսի. Ս. Պետրոսե. 1879 թ. 4.

2. Zur arm. Götterlehre, Էր. 127.

4. Վիպական գծերից է և Կաղմոսի փախուստը Բէլի բազմութեան առաջից և քաջընթացիկ մարդոց ձեռով իմաց տալը Հայկին որ պատրաստութիւն տեսնէ Բէլի դէմ երկուս Թիշնք միայն Շահնամայից Գեթգեհէմին Իրանի և Թուրանի սահմանի վրայ Սպիդ բերդի հրամանատարին: Սոհրաբը ժողովում է զօրքերի մեծ բազմութիւնը հսկաների և մեծ ամբոխով գալիս է Իրանի վրայ: Նոքա գալիս մօտենում են «Սպիդ կոչուած բերդին»: Գեթգեհէմը Սոհրաբին յայլելու յետ մղել չէ կարողանում և «շտապով փախում է» դէպի երկրի ներսը իւր ամբողջ զերգաստանի մարդկանցով: մի «արագընթաց մարդու» ձեռով յայտնելով Շահին. «Մեր վրայ եկաւ մի բազմութիւն ձիաւոր: ամենն էլ կոռւարար եւ կտորի՞ մարդիկ զօրաւոր»: որոնց պարագլուխն է մի պահլաւան քաջ: «Իրա մի հսկայ, որի հասակը բարձրութեամբ երկմեջ ընով նոժուց է շատ վեր»: կամ «թոյլ ըարձր որպէս մի լնդ»: Գեթգեհէմն այս յայտնելուց յետոյ՝ աւելացնում է թէ իրենք չկարողանալով կռուել Սոհրաբի դէմ փախում են դէպի երկրի ներսը և, եթէ Շահը յապաղի և զօրքերը չվարէ կռուելու, նորա երկիրը տակն ու վրայ կը լինի և նորա փառքի մեծութիւնը կանցնէ: ¹⁾ Ի՞նչ է Կաղմոսի արարքն և Հայկին ուղարկած լուրը: եթէ ոչ ինչ որ այս Գեթգեհէմն է ասում: Նմանութիւնը շատ տեղ նոյն իսկ բառերի մէջ էլ երևում է: «Բէլ ամբոխիւ հետեակ զօրաց: զայ հասանէ... մերձ ի տունն Կաղմեայ: Փախուստական լինի Կաղմոս առ Հայկ: քաջընթացիկս առաջի իւր առաքէ: Դիտեալ ասէ: ով մեծդ զիւցազանց: զի զիմեալ զայ ի վերայ քո Բէլ յաւերժիւք քաջօք: և երկայնադիւղօք հասակօք սկայիւք մրցողօք: Եւ իմացեալ իմ զմերձ լինելն նորա ի տուն իմ: փախայ: և զամ աւասիկ տազնապաւ: Արդ ամապարեա խորհել որ ինչ զործելոց ես: չմտ. Սերէոս (Անանուն) եր. 3. «Դիմեալ զայ Բէլ ալքայ ի վերայ քո: և եկն եհաս միշե ի տուն անդր. և ևս կնաւ իմով

և որ դւռովք ահաւասիկ կամ փախուստական: Գեթգեհէմի և Կաղմոսի արարքը սահմանադրի պաշտպանութեան մի յիշողութիւն է միայն: Իսկ Կաղմեայի և Կաղմեան նախարարութիւնը կամ տուն Կաղմեայ ըստ Խորենացու: յայտնի է մեր պատմութեան մէջ Հայաստանի հարաւային սահմանների վրայ: ¹ Կաղմեայն ազգի իրրեւ նախահայր Կաղմոս ստեղծուած լինելը մի տարօրինակ բան չպէտք է համարուի: Մեզ չպէտք է շփոթեցնի Կաղմ—ոս անունն յունական վերջաւորութիւնը ²: Բաւական է միայն յիշնք Ագաթանգեղոսի մէջ Տրդատ ձեւի հետ և յունական վերջաւորութեամբ Տրդատիւր, Տրդատէս ձեւերը: Այն ինչ որ Ագաթանգեղոսի մէջ ընական է թուում ինչո՞ւ Խորենացու մէջ Կաղմոս ձեւի համար ընական պիտի չլինի: քանի որ Խորենացին պարզապէս յիշում է: որ Մարաբասից և յատկապէս յունաբէնից (Ա. բ. թ.) է ասում այդ պատմութիւնը:

5. Հայկի առասպելի ժողովրդական ծագումը երևում է յատկապէս և այս կտորից: «Իսկ ըլուրն ուր քաջամարտիօքն անկաւ Բէլ: անուանեաց Հայկ Գերեզմանս: որ այժմ ասին Գերեզմանակք: ³ Բայց զղիտն Բէլայ պաճուճեալ իմն դեղովք: ասէ [Մար Արաս]: հրամայէ Հայկ տանել ի Հարք և թաղել ի բարձրաւանդակ տեղւոյ: ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց» (Ա. ժա.): Այս կտորը պ. Խալաթեանը (I. եր. 121. II. եր. 22) քաղած է համարում Սուտ-Կալիսթենէսից: որի մէջ գրած է. «Սա (կղզին) Փարոս կոչի: քայց Պրոտէս ի սմա բնակեցաւ. և շիրիմն Պրոտեայ առ մեզ՝ պաշտաման արժանի եղեալ: Ի վերայ լերին միոյ ըարձու եկեալ բերին զնա: այդ որ այժմ՝ կոչի զիւցազգի գերեզման և ցուցին նմա (Աղէքսանդրի) զտապանն: Պ. Խալաթեանինն են զճաճները:

¹. Տրդատի: Ռոսսաւ եւ Սոհրաբ: քաղմ. Ս. Դիւրգաեանց եր. 70 հսկ.

¹. Ալիշան: Այբարաս: եր. 425, 427. ըստ «Հայաքիս քանակի զօրարութի» Կաղմեայի: (որից յետոյ գալիս են Կորդուացի: Արծրունի: Ռոսունի: եւ Մոկացի): հաւանում են 13200 զինուոր: որից ասելի մեծ քիւ միայն Սիւնիք ունիւն արեւելեան սահմանների վրայ:

². Халат. Арм. Эпосъ, եր. 78.

³. Մի խումբ մեծացիներն մեջ այս ընթերցումն է: որ եւ միշտ պէտք է համարել:

Պրոտէս թաղուած է մի բարձր լեռան վրայ՝ որ կոչուած է «գիւցաղգի գերեզման»։ Բեկ նոյնպէս թաղուած է մի բարձրաւանդակ տեղում՝ բայց ոչ թէ նորա թաղուած տեղն է կոչուած Գերեզմանք կամ Գերեզմանակք՝ այլ նորա ընկած՝ սպանման տեղը։ Ահա բովանդակութեան բոլոր նմանութիւնը։ Եւ այդ նմանութիւնը Կալիսթենէսից վերցրած համարել լեզուական կողմից հիմնուելով սոսկ ոչնչութիւնների վրայ—այդ գիտենք։ պ. Խալաթեանի վարուելու եղանակի թոյլ կողմն է։ Մի հաս որ այժմ՝ (պ. Խալաթեանը գտել է և մի քայց շաղկապ sie!)—ահա՛ բոլոր լեզուական նմանութիւնն ևս—«Տարօնոյ դաշտի բերանը Աշտիշատայ մօտ՝ կայ մի գեղ՝ զոր այսօր Բագչոյ կը կոչեն տեղացիք։ քայց Տարօնոյ պատմիչ Յովհաննէս եպիսկոպոս Վիշապ անուն կուտայ անոր»¹)։ «Իրեւ լուաւ շահն [Շահաբաս] զայս համրաւ դարձոյց գերեսախը՝ և եկն յերուանդակերան հին՝ որ այժմ ասի Աղջաղալայ»²)։ Ուրեմն ինչ պիտի եզրակացնել։—Սրուանձտեանն ու Առաքել Դաւրիժեցին Խորենացոյց կամ սուտ Կալիսթենէսից են վերցրել իրենց որ այժմ (այսօր) ասի կը կոչեն և քայց բառերը։ Եւ եթէ մեզից ամեն մէկն էլ խօսելով մի տեղի հին բայց քիչ փոխուած անուան մասին կարող է աւելացնել օրինակ՝ «Կուռշ որ այժմ ասուած է Կօշ»։ ինչո՞ւ Խորենացին չէր կարող գրել «Գերեզմանս որ այժմ ասին Գերեզմանակք»։

Լեզուական նմանութիւնն այսպէս ոչնչութիւն է դառնում. մնում է բովանդակութեան իրական նմանութիւնը, որ է՝ Բեկ ու Պրոտէս բարձր տեղում են թաղուած։ Բայց այդ դեռ ապացոյց չէ կարող լինել, որ Խորենացին սուտ Կալիսթենէսից է վերցրած, այլ ապացոյց այն բանի, որ Հայկի առասպելը ժողովրդական ծագում ունի։ Երբեք միայն թէ իրարուց տեղով ու ժամանակով հեռու ազգերի մէջ որքան շատ իրարու նման առասպելներ և նոյն իսկ մի որ և է տեղի հետ կապուած աւանդութիւն-

ներ կան։ Զմեռանալք և այն, որ հին Գերեզմանները սովորաբար բարձրաւանդակ տեղերում են շինուած և խիստ շատ տարածուած է զանազան հին և նոր ազգերի մէջ ցոյց տալ, սովորաբար բարձր տեղերում մի տեղ՝ հսկայի-օղուղի կամ ազնաւորի գերեզման կոչմամբ։ Թողնենք օտարներին։ Միթէ Հայաստանում այսօր ևս այդպիսի գերեզմաններ շատ չկան։ Յայտնի են Փոքր Մասիսի վրայ եղած Օղուղի գերեզմանները։ «Շէյիք բնուած գերեզմանները, զորս քրդերը կը պատուեն և շատ տեղ Հայն ալ քողին հետ ուխտով կ'երթայ հոն . . . որք առ հասարակ ծառերու պրակներով շրջապատուած կը լինին և դարերու վրայ բարձրադիր»¹)։ Մի «Ազնաւորի գերեզման» նկարագրում է Սրուանձտեանը Մանազկերտի մօտերը, «ուր քայլ մեծութեամբ . . . որ քարակոյտով մը բարձրացած է»։ որ գիւղի տէր շէխը իւր նախնի համարելով «կը մեծարէ իրեւ մարգարէի շիրիմ»։ «Այսպիսի մեծագիր և Ազնաւոր անունով գերեզմաններ կը գտնուին ուրեք ուրեք»։ աւելացնում է Սրուանձտեան²)։ Նոյնպիսի մի Ազնաւորի գերեզման նկարագրում է նա նաև Բօստան Խայա գիւղի մօտ դարձեալ Մանազկերտի մօտերը, և մինչև անգամ Ազնաւորի մասին պատմուած մի առասպել է մէջ բերում և թէ «գեղի կնկտիքը շէր [երգ] կրկնակն Ազնաւորի վրայ»³)։

Պրոտէսի «գիւցաղգի գերեզման» ազգեցութեան տակ չեն ստեղծուած, անշուշտ Հայաստանում այժմեան այն հսկաների։ Ազնաւորի կամ Օղուղի գերեզմանները, որոնք նոյնպէս պաշտամունքի առարկայ են, ինչպէս Պրոտէսի գերեզմանը։ Այդպիսի գերեզմանները ասացինք, շատ տարածուած են և ոչ միայն Հայաստանում, այլ ուրիշ երկրներում, ուր ցոյց են տալիս այս կամ այն դիւցաղնի գերեզմանը։ Եւ չգիտենք ինչո՞ւ երբ Սրուանձտեանի կամ ուրիշների մէջ, մի այդպիսի գերեզմանի մասին գրուած ենք գտնում, շատ բնական ենք համարում իսկ երբ Խորենացոյ պատ-

1. Սրուանձտեան, Գրոց-Բրոց, էր. 91:

2. Պատմ. Առաքել վարդապետի Դաւրիժեցոյ, Վարդապետ, 1884. էր. 26.

1. Սրուանձտեան, Գրոց-Բրոց, էր. 103:

2. Նոյն էր. 63.

3. Նոյն էր. 66 հսն.:

մեծիան մէջ գտնուած ենք թէ մի տեղ ցոյց էին տալիս իբրեւ հսկայ Բէլլի գերեզման, պիտի կարծել թէ շինծու է: Պրոտէսի գերեզմանը միայն այդ կարգի բազմաթիւ գերեզմաններին թուին է պատկանում ինչպէս և Բէլլի գերեզմանը: Եւ այս հանդամանքը հենց որով Բէլլի առասպելը կապուած է հսկաների գերեզմանի շատ տարածուած մի ժողովրդական աւանդութեան հետ, մեծացնում է հաւանականութիւնը թէ այդ առասպելը ժողովրդական ծագում ունի:

Երբ այսպէս, Հայկի առասպելն իւր ընդհանուր բովանդակութեամբ ու գոյնով և ապա վերեւում յիշած զլխաւոր մասերով ժողովրդական վիպական կերպարանք ունի, այն ժամանակ նոր իրենց նշանակութիւնն են ստանում և գալիս վիպական կերպարանքը զօրացնում են և ուրիշների դիտած երեք կողմի ևս՝ որոնք մենակ վերցրած առանձին արմէք չունին հարկաւ: Այդ կողմերն են՝ նախ բազմաթիւ մանկիկները, որոնք մեծ մասամբ վերաբերում են ինչպէս սովորաբար վէպի մէջ հերոսների արտաքինի նկարագրութեանն ու մարմնական յաջողութեանը: Բայց այդ մանկիկները բուն հարազատ ժողովրդական համարելու ոչ մի հիմք չունին: Ի նկատի պէտք է ունենալ և այն որ Խորենացին անվիճապէս չէ օգտուում ժողովրդից, այլ առնում է մի օտար լեզուով գրուածից: Այնուհետեւ նշանակութիւն են ստանում նաև զրոյցի մանրապատում՝ հանգամանքը, թէպէտեւ այստեղ ճարտասանութիւնն էլ կարող է մեծ դեր խաղացած լինել — և ապա՝ յատուկ անունների ստուգադանութիւնը:

Հարց բառի ստուգաբանութեն հայր բառից ծագումը՝ բանասիրութեան անհամաձայն է գտնում Գարագաշեան¹⁾ որովհետեւ հայր բառի յոգնակի հարց հոլովում է հարանց) միջդեռ յատուկ անունը հարց ունենում է հարբայ: Ուստի աւելի արամաբանական է ենթադրել, զրոււմ է նա թէ հարց անուան պատահական նմանութիւնը հայր բառին յոգնակեոյն հետ թելադրած է այն պատմու-

թիւնը: Այս անհամաձայնութիւնը, սակայն, արժէք ունի, երբ այդ ստուգաբանութեան վրայ պատմական տեսակետից նայենք, ինչպէս և նայում է պ. Գարագաշեանը: Այսինքն, երբ հաստատել ուզենանք թէ իրօք հայրեր հարց են բնակուել այդ տեղում ուստի և յետագայում տեղի անունը հարց է կոչուել: Բայց մեր նպատակն այստեղ այդպիսի պատմական ձմարաութիւն գտնել չէ. այլ այն միայն թէ կարող չէ՞ր արդեօք ժողովրդի մէջ նոյն իսկ երկու տարբեր արմատներից ծագած բառերի պատահական նմանութիւնից մի աւանդութիւն ստեղծուած լինել: Ամենայն ազդերի մէջ կան այդպիսի տեղական ժողովրդական աւանդութիւնների, որոնք այս կամ այն տեղի լեռան, աւերակի ևլն ծագումը բացատրելու համար են միայն ստեղծուած: Այդ այսպէս կոչուած պատճառական զրոյցները (ätiologische Sagen) հարկաւ մեծ մասամբ քմահաճոյ բացատրութիւնների, յաճախ հիմնուած ստուգաբանութիւնների վրայ, որոնք լեզուաբանական տեսակետից ճիշտ չեն անպատճառ: Ուստի և այդ «բանասիրութեան անհամաձայնութեան» վրայ հիմնուելով միայն կարելի չէ ասել թէ հենց ժողովրդի մէջ ևս չէ եղած հարց անուան մի այդպիսի բացատրութիւն և թէ այդ շինծու մի բան է: Միւս կողմից «բանասիրութեան անհամաձայն» լինելն ևս զեռ բոլորովին չէ ապացուցուած, որովհետեւ յայտնի է համաբանութիւնը (analogie) որքան մեծ դեր է կատարում լեզուների մէջ, և որքան խոնարհման ու հոլովման և այլ ձևեր լեզուների մէջ փոփոխուած են համաբանութեամբ: Եւ մի՞թէ, այդ օրէնքով չէ որ մենք այժմ վարք — վարքի, բարք — բարքի, աչք — աչքի ենք հոլովում փոխանակ վարուց — բարուց, աչաց հոլովելու և կամ օտարազգի ծագում ու կազմութիւն ունեցող Տփղիս իբրեւ յոգնակի անունելով Տփղիսաց է հոլովում, փոխանակ Տփղիսի կամ Տփղիսայ հոլովելու: Պ. Գարագաշեան չէ յիշում թէ որ դարու մատենագրի մէջ հարց — հարբայ է հոլովուած²⁾

1. Ա. Մ. Գարագաշեան, Քննական Պատմ. Հայոց, Մասն Ա. Թիֆլիս, 1895 եր. 146:

1. Халат. Арм. Эпосъ, стр. 76.

2. Արարատ, 1899. № 9. եր. 412 հ. Գարագաշեան

Բայց որ դարում էլ որ լինի մի անգամ երբ Հարք բառի ծագումը մոռացութեան է տրուած, կարող չէր արդեօք մեր գրականութեան սկզբի դարերում էլ համարանութեամբ Հարքայ հօլովուել: Մենք, անշուշտ, չենք պնդում որ Հարք հայր բառի յոգնակին է, այլ այն միայն ուզում ենք ասել, որ այդ բացատրութեան դէմ առարկութիւնը դեռ շատ թոյլ է:

Նախ քան մեր եզրակացութեան նախփոխումին անցնելը, նկատենք, մի հանգամանք ևս: Զգիտենք ինչո՞ւ արդի ժողովրդական զրոյցները, որոնք պատմում են Հայկի ու Բէլի մասին Վանայ ծովի շուրջը, անպատճառ թորենացու ազգեցութեամբ մը տած պիտի համարել ժողովրդի մէջ, և ոչ թէ, թորենացուց անկախ հին ժողովրդական զրոյցների սերունդ, որոնք կապուած մնում են Վանայ ծովի շուրջը—և յատկապէս այդ ծովի շուրջը—եղած տեղագրական անուններին հետ: Վանայ մէջ մէկ թաղ կայ բնակչաց, բերդի պարսպէն դուրս, որ մինչև ցայսօր Հայկականք կրկոչուի... Հայոց ձոր... մինչև ցայսօր Հայոց ձոր կրկոչուի. այնտեղն է Տըր-շող գեղը, ուր Հայկի լայնալիճ նետով բացուած հսկայ Բէլի զրահապատ կողի շողը կրտսնուէր¹. այնտեղ է Հայկ և Աստուածաշէն անունով գեղերը... բնակիչք թէկ կանուանեն այս [Հայկ] գեղը և թաւու ձոր կանուանեն զՀայոց ձորն, որ կրնայ ըսուիլ նաև Հաւոց ձոր²:

Նոյն տեղում (եր. 48) Սրուանձտեանը պատմում է հետևեալ զրոյցը. «Դատվան գեղէն Ջրհորի սահմաններով դէպի Նէմրութ ի գաշտակողմն գնալով կրտսնեա կարգ մը տնկուածի կամ կանգնուածի պէս սև քարեր, որոնք հեռուէն և մութ ժամանակ կրնան խա-

րել զմարդ՝ թէ կարաւան են անոնք, կամ մարդ և ուղտ: Տեղացիք Բէլի ուղտեր և ուղտապաններ կանուանեն զանոնք, և որոց համար կըզիպասանեն ու կրան թէ «Կռապաշտ թագաւոր է եղեր Բէլը» և մեծ զօրքով եկեր Հայոց թագաւորի ու երկրի վրայ կոխ. Հայոց թագաւորը Աստուծոյ ձեռնով սպաններ է զԲէլը և հաներ Նէմրութայ գլուխ. այնտեղը փորեր թոնիր շիներ, մէջը կախեր վառեր է: Աստուծոյ հրամանքով այն կրակը ջուր է կրտրեր, զմոխիրն հողի տակ իջուցեր, որ չեղնի քամին անոր փռին տանի: Բէլի մարդիկ և ուղտերն ալ իրենց վախէն քար են կտրեր: Մինչև ցայսօր թոնիրն ու ջուրը կայ. և այս ջուրն է, որ սարի տակով կիջնայ Մեղրագետի ակնէն կրքիսէ և այդ գետը կրկազմէ:

Նոյն զրոյցի մի ուրիշ ձևը բերում է հ. Սարգսեան իւր տեղագրութեան մէջ.

Եթէ Սարգսեանի բերածի մէջ, բազմաթիւ ժողովրդական մոտիւնների հետ, գրքերի ազգեցութիւն ևս երևում է, Սրուանձտեանի բերած այս զրոյցի մէջ թորենացու ազգեցութիւն չէ երևում: Կռապաշտ թագաւորի և (Խաշապաշտ=) հայոց թագաւորի կոխը շատ սովորական մի բան է մեր ժողովրդական զրոյցների մէջ և տեղիք չկայ կարծելու թէ թորենացուց է անցած ժողովրդին: Բայց և այդ կոխը հենց երկրորդական տեղ է բռնում մեր զրոյցի մէջ, ուր էականը Բէլի ուղտերի քարանձաւն է և Նէմրութ սարի զլխի ջրաւաղանի ծագման պատմութիւնը: Բայց այս վերջին երկու տեսակի աւանդութիւններն էլ շատ տարածուած են: Քար կտրելու այդպիսի պատմութիւններ շատ կան, որոնցից մի երկուսն էլ բերում է Սրուանձտեանը (եր. 50 հտ.): Նոյնպէս աղբիւրների ջրաւաղանը թոնրով և թոնրում այրուելու մի պատմութեամբ բացատրելը մի տարածուած աւանդութիւն է, որ նոյն Սրուանձտեանի մէջ (եր. 53) գտնում ենք, մի ուրիշ ձևով կապուած նաև Լէզք գիւղի մօտ եղած աղբիւրի ջրաւաղանի հետ: Իսկ այս աւանդութիւնն իբրև թափառական զրոյց՝ գտնում ենք և Տ. Նաւասարդեանի հեքիաթների ժողովածուի մէջ է. գրքոյկ եր. 39 «Աղքատին պաշտուող կնիկը» վերնագրով: Սրուանձտեանի բերած այդ զրոյցն ու-

վրդ. Եովսէփեանի «Խոսրովիկ Թարգմանիչ» յօդուածի մէջ, Մայր Աթոռի ցրտաբանի Մ. Տ. № 730 «Յովնանու իմաստասիրի հայոց կարգիկոսի սակա ժողովոց որ եղին ի Հայս» մեղագրից առած կտրի մէջ յիշում է Մանգլիկոսի ժողովի (726 թուին) եպիսկոպոսների քուտմ լեկիկոս Հարթ... անասց վերջի յ օսուի:

1. Անա մի ստուգարանութիւն որ լցիւնեմ ժողովրդից և տառում Սրուանձտեանը, թէ իրենցից է յիշում:
2. Սրուանձտեան, Գրոց Բրոց, եր. 113 հտ.:

ինն, իւր ձեով թորենացու աղքեցութեան
սակ ստեղծուած համարելու տեղիք չունինք:
Ետ հաւանական է, որ ինչպէս տեղագրա-
կան անունները Հայկ, Հայոց ձոր և լն. թո-
րենացու ժամանակից ցայսօր հարկաւ անկախ
թորենացուց, մնացել են ժողովրդի մէջ, այդ-
պէս և արդի ժողովրդական զրոյցը հին զը-
րոյցների մնացորդն է, որը, շեշտում ենք,
թորենացու զրոյցին շատ էլ նմանութիւն
չունի: Յայտնի է, ժամանակի հեռաւորու-
թիւնն առանձին նշանակութիւն չունի զը-
րոյցների յարատեւելու նկատմամբ: Եթէ Ա-
նանիա Շիրակացու ժամանակից մինչև այ-
սօր կարող է մնացած լինել Վահագնի յարդ-
րութեան առասպելը նոյն բնաւորութեամբ,
որ ունի այդ առասպելը Շիրակացու մէջ¹⁾,
ինչու անհաւանական պիտի լինի թէ թո-
րենացու կամ Մար Արաքի ժամանակից
մինչև այսօր կարող էր ժողովրդի յիշողու-
թեան մէջ մնալ Հայկի ու Բէլի առասպելը:

Այս ամենն ի նկատի ունենալով, ինչ-
պէս և այն, որ Հայկ՝ հսկայ նշանակութեամբ
և իբրև առասպելական որսորդ² Օրիոնի
հաւասար գործածուած ենք գտնում թարգ-
մանիչներից, գալիս ենք այն եզրակացու-
թեան, որ Հայկի ու Բէլի առասպելն ամեն
նայն հաւանականութեամբ ժողովրդական
հիմունք ունի: Եղել է, հաւանօրէն, մի տե-
ղական առասպել՝ հսկայ որսորդ Հայկի և մի
օտար բռնաւոր հսկայի՝ Բէլի կռուի մասին,
որոնց համար և Վանայ լճի շուրջը տեղեր
են ցոյց տուել:


(Երաւանիէն)

Մ. Արեղեան



1. «Ենթադրող նշան է, որ ժամանակով ուրիշ
առարձանց աւսուած իւր մշակները դրկեր մեր երկրի
աւսուած ոչ կային յարկերը գողցեր... յարդրապիւր
երկնից երևան ու մնացեր»։ Արուսեանեան Իրաց-Իրաց
եր. 108.

2. Հայկին իրեն որսորդ և ներկայացնում են Բեկի
խօսքը Անտոնովի մէջ. «... Ոնեկով ի գործս զմանկունս
ի անմ խնայ զորսականս» (Սեբեոսի եր. 4):



ԱՅԼԵԻԱՅԼՔ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԴՐ. Կ. ՌԵՆԿԼԱՄԻ.

Ա.

ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԸՄՊԵԼԻՔ.

Քաղց. Մեզ ուտել է գրգռւմ քաղցի զգա-
ցումը, որ կախումն ունի ստամոքսի կծկուելուց
կամ սեղմուելուց: Մարսողական գործարանի
երկար խողովակը, որն միջով ներս է գնում
կերակուրը, բացուում է ստամոքսի մէջ. սա այդ
երկար խողովակի շարունակութիւնն է և ունի
կոր պարկէ ձև, որ նեղանում է ծայրի կողմում,
և այդտեղից սկսուում է բարակ աղիքը. այն տե-
ղում, ուր ստամոքսից յետոյ սկսում է բարակ
աղիքը, գտնուում է մի հաստ օղածե դուռը,
որ ծառայում է ստամոքսը փակելու և բանալու
համար: Ստամոքսի սրտերը բաղկացած են երկու
շերտ հիւստեւածքից, որոնց մէջանդր գտնուում
են միանային թելեր. այդ թելերը, մեր մարմնի
մկանունքի նման, կարող են կծկուիլ և երկարել,
Երբ կերակուրը կամ ըմպելիքը մտնում է ստա-
մոքսի մէջ, սա լայնանում է և դրան օղը սեղ-
մուում է. այսպիսով ստամոքսը դառնում է
մի փակ պարկի, կերակուրը չէ կարող այնտեղից
անցկենալ աղիքի մէջ: Ստամոքսը իւր մէջ փակուած
սննդարար նիւթերի շուրջն անդադար սեղմուում
է, որովհետեւ մկանունքը իրենց շարժումներն ա-
նում են կանոնաւոր յաջորդականութեամբ: Եթէ
մենք ուտելու կամ խմելու միջոցին յանկարծ շատ
օղ ներս քաշենք, օղը՝ թեթեւ լինելու պատճառով
գտնուելով վերեւում, դուրս կը մղուի ստա-
մոքսի սեղմուելու շնորհիւ, կանցնէ առաջ կերակրի
ընդունարանը և ապա բերանը. սորանով է բա-
ցատրուում բնկալը: Ստամոքսը սեղմուելով՝ նո-
րաւ մէջ եզած նիւթերը սկսում են շարժուել
պտտւաւորաձև. երբ այդ նիւթերը կարծր են և
ծանր, ստամոքսի մկանունքը, ստիպուած լինե-
լով աւելի սաստիկ կծկուելու, արագ սեղմում
են պատերը կերակրի շրտ կողմից և յառաջաց-
նում են ստամոքսի ցաւ, ճմուռն: Եթէ ստա-
մոքսի մէջ օշինչ չկայ, նա մինչ այն աստիճան է